

# Հայոց լեզու և հայ գրականություն /հարցաշար/

## 1. Լրացնել բաց թողնված տառերը (բ-պ-փ).

նր-ություն, համ-ուրել, ճամ-որություն, սր-ագրիչ, դար-նոց, համ-երություն, ճող-յուն, ի-րև, Մերո-յան, ա-խազ, եր-եք, եր-նավառ

## 2. Լրացնել բաց թողնված տառերը (ձ-ծ-ց).

վերադար-, վար-կան, հինավուր-, հար-նել, հանդեր-անք, Համբար-ում, արվար-ան, վերամբար-, վեր-նել, փոր-անք, խուր-, բացար-ակ

## 3. Լրացնել բաց թողնված տառերը (եղ-ն).

գոտ-որել, -րոպական, սերկ-իլ, հ-ասպառ, ոսկ-ագ, գին-աճառ, հոգ-արք, գեր-արել, ոսկ-արս, ազ-ագ, որբ-այրի, ոսկ-որել

## 4. Լրացնել բաց թողնված տառերը (ը).

ակ-նդետ, կոր-նթարդ, առ-նչվել, անհյուր-նկալ

## 5. Լրացնել բաց թողնված տառերը (ջ-ճ-չ).

մի-ատ, գո-յուն, կառ-ել, ակնակապի-, հառա-անք, ա-առու, բա-կոն, դար-նագույն, խո-ակ, խո-կոր, ա-ալուրջ, գոքան-, անտերուն-, զեղ-ել, փար-, պ-րասեր

## 6. Ո՞ր բառերն են գրվում միասին, անջատ կամ գծիկով.

տասը (քսան), գունդ (գունդ), տարեց (տարի), (սերնդե) սերունդ, (տուն) թանգարան, դեմ (հանդիման), (ուշի) ուշով, որոշիչ (որոշյալ), հեռու (մոտիկ), դուռ (լուսամուտ), ժամ (պատարագ), ծիլ (ծաղիկ)

## 7. Բաղադրյալ հատուկ անունների գրություն.

Դ(դ)ավիթ Ա(ա)նհաղթ, Կ(կ)ույս Հհամաստեղություն, Լ(լ)ազարյան Ճ(ճ)եմարան, Լ(լ)ա Մ(մ)անջ, Ա(ա)րշակ Ե(ե)րկրորդ, Հ(հ)այաստանի Հ(հ)անրապետություն, Հ(հ)անրապետության Հ(հ)րապարակ, Ջ(զ)որավար Ե(ե)կեղեցի, Ե(ե)րվանդ Ս(ս)ակավակյաց, Ե(ե)րրորդ Հ(հ)այք, Հ(հ)այկական Բ(բ)արձրավանդակ, Մ(մ)խիթար Ս(ս)եբաստացի

## 8. Ու՞սում և՞ արտասանությունը (օ-վօ).

լավորակ, հայրորդի, բազմառատ, բոկոտ

## 9. Տրված բառերում շեշտը ո՞ր վանկի ձայնավորի վրա է դրվում.

քաղցր, գրեթե, քսանութ, քանիերորդ

## 10. Տրվածներից ո՞ր մեջ կա ու ձայնավորի հնչյունափոխություն կա.

հրավեր, հրանոթ, հրաման, հրահանգ

## 11. Տրվածներից ո՞ր մեջ կա յա երկհնչյունի հնչյունափոխություն.

խարտիշահեր, հեծելագոր, մարգարեաբար, քրիստոնեական

## 12. Տրված անանգավոր բառերից ո՞ր բառի մեջ կա ն՛ ախաճանց, կ՛ վերջաճանց.

ապակյա, ստորգետնյա, միանգամյա, տասնօրյակ

**13. Տրված բառերից որո՞նք են կազմված միայն փակ վանկերից.**

համրանալ, պատճառներ, անցկացնել, կրծքավանդակ, ընտրարշավ, հնձվոր, աջհամբույր, տնկարան, ենթարկվել, կապտել, վայրկյաններ, ընդունված

**14. Գտնել այն բառը, որի կազմում հոդակապ կա.**

ապակեպատ, օրհներգ, ձնեմարդ, մոխրաման

**15. Գտնել այն բառը, որը հոմանիշ չէ ծաղրել բառին.**

ծանակել, պարսավել, երգիծել, հեզնել

**16. Տրված բառազույգերից, որո՞նք են կազմված միայն հոմանիշներից.**

քանքար-անկյունաքար, բնիկ-երկրացի, բողոքել-տրտնջալ, բովանդակ-ամբողջ, գամվել-մեխվել, գաղտնապահ-փակբերան, գարշադեմ-տգեղ, գնահատելի-արժեքավոր, բլուր-բարձունք, անտունի-տնանկ, բծախնդիր-քմաճաշակ, բյուր-բազմաթիվ, գիշերերգ-ցայգերգ, արամբի-զամբիկ, գինարբուք-խնջույք, գինդ-ականջօղ

**17. Տրված բառազույգերից, որո՞նք են կազմված միայն հակահիշներից.**

գիտուն-իմաստակ, բիրտ-քնքուշ, բաց-գոց, մարմնեղ-վտիտ, պերճ-անշուք, բարեկեցիկ-անապահով, հաստատուն-անկայուն, հոռետես-լավատես, լայնաթիկունք-պարթև, խորապես-հարևանցի, մեծահարուստ-ընչազուրկ, կալանավորել- ձերբազատել, հնարագետ-անճարտար, իրական-երևակայական, ակնածել-արհամարհել, ժուժկալ-անզուսպ

**18. Գտնել բառերի բացատրության ճիշտ համապատասխանեցումը.**

- |             |             |
|-------------|-------------|
| ա. հաճել    | 1. դեզերել  |
| բ. հեծել    | 2. ձի նստել |
| գ. հեծկլտալ | 3. տառապել  |
| դ. հեծնել   | 4. հեկեկալ  |

**19. Գտնել տրված համանունների բացատրության ճիշտ տարբերակները.**

հարկ-անհրաժեշտություն, կարիք  
հարկ-տուրք  
սեր-կաթի երեսի թանձր և յուղալի շերտը, սերուցք  
սեր-համակրանքի, հարգանքի զգացում  
այր-տղամարդ  
այր-ամուսնուն կորցրած կին  
մարտ-կռիվ, ճակատամարտ  
մարտ-տարվա երրորդ ամսվա անվանումը

**20. Ի՞նչ է նշանակում օշարակ բառը.**

**21. Ի՞նչ է նշանակում հոգի տալ դարձվածքը.**

**22. Գտնել բառագործածության սխալ ունեցող նախադասությունը.**

Բայց ուղտերից մեկը չի շարժվում, նստած է վեր չի կենում, միայն նայում է:  
Համառոտ ուղտի պահապանն իր թաղիքը փռում է ուղտի կողքին, վրան քաշում է իր աբան ու քնում է այն հույսով, որ մինչև զարթնելն ուղտի սիրտը կքնքշանա:

Ուղտապանը սրբեց արցունքները, հավաքեց մեր բերած հացը, ճանկեց ուղտի թամբը, մագլցեց վեր ու ճանապարհ ընկավ դեպի անապատը՝ ժպտուն և ուրախ:  
Ուղտապանը ողջունում էր փողոցում կանգնած մարդկանց, հավաքում նրանց նետած դրամները, հացի կտորները լցնում տրցակի մեջ և քաղաքից հեռանում դեպի ավազները, դեպի հարավի արեգակը:

**23. Ի՞նչ վերջավորություններ կատանան տրված բառերը հոգնակի թվի կազմություն ժամանակ (-էր -ներ).**

ծրագիր, սպա, ջրհոր, արկղ, լրագիր, ոտնաձայն, ծառ, տեգր, առանձնատուն, բաղաձայն, հարս, աստղ, հավաստագիր, ժամացույց, դեղատուն, արքայադուստր

**24. Տրվածներից ո՞ր ձևը գերադրական աստիճանի իմաստ չի արտահայտում. գեղեցիկներից գեղեցիկը, ամենից դժվար, բա՛րձր-բա՛րձր, ավելի հզոր**

**25. Հարակատարի ո՞ր ձևն է նաև իբրև գոյական հանդես գալիս. ծաղկած, բտած, արարած, փտած**

**26. Տրված բառերից ո՞րը հաստատական վերաբերմունք չի արտահայտում. անտարակույս, անշուշտ, արդարև, այո՛, անպաճույճ, իրոք, իհարկե, անպայման, անպատճառ, հարկավ, անկասկած, իսկապես**

**27. Գտնել այն նախադասությունը, որի մեջ համաձայնության սխալ կա.**

Արեգակի ոսկեդեղձան շողերը կրակով էին լցրել ձորը:  
Արևածագին գիշերվա նիրհից զարթնել է ամեն ինչ, իսկ վաղորդյան արեգակի շողերը լուսավորում են շրջապատը:  
Բակ մտան քահանաների մի խումբ՝ բուրվառներից ծխի կապույտ քուլաներ արձակելով:  
Աղջամուղջի մեջ նախ երևաց կենդանու ողորկ մեջքը, ապա՝ փոքրիկ գլուխը:

**28. Կետադրել տրված նախադասությունները (ո՞ր նախադասության մեջ միջակետ պետք է դրվի)**

Բաց ծովում ջուրը կապույտ է ինչպես ամենագեղեցիկ տերեփուկի պսակաթերթերը և թափանցիկ ինչպես ամենանուրբ ապակին:  
Բոլոր-բոլորը զարմանալիորեն լուռ էին ու տխուր բացի թագուհուց որն անվերջ ինչ-որ բան էր փսփսում թագավորի ականջին ու ծիծաղում:  
Քաղաքի դարպասների մոտ պահապաններ չկային մենք անարգել ներս մտանք:  
Դրանք արդարադատության նախարարության ներկայացուցիչներն էին դատավորներն ու դատախազները պետական մեղադրողներն ու դատապաշտպանները:

**29. Գտնել այն նախադասությունը, որտեղ կետադրական սխալ կա.**

Մի օր բերդում պատսպարված գյուղացիներից մեկը գալիս է հայ իշխանների մոտ, գլուխ տալիս ու ասում.  
-Պետք է թշնամուն ցույց տալ, թե մենք հացի անսպառ պաշար ունենք:  
Վեց ամիս գիշերուզօր գրոհում է Լենկթեմուրը, բայց չի կարողանում կոտրել հայերի դիմադրությունը, մտնել անառիկ բերդը:  
Անցան օրեր և ուղտը շարունակեց իր անասնական համառությունը:  
Աշխարհի հիշողության մեջ Հայաստանը լեռների՝ քարափների, ժայռերի ու ձորերի մի զանգված է:

30. Համապատասխանեցնել տրված նախադասությունները ըստ տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականության.

1. Ռազմի և պտղաբերության աստվածուհի Անահիտը, որ համարվել է բոլոր առաքինությունների մայրը, Արամազդի դուստրն է:
2. Բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին գրույցներ են առասպելները, որոնց նյութը դիցաբանությունն է, իսկ վիպերգերի նյութը գլխավորապես ժողովրդի պատմությունն է:
3. Հայոց դիցարանի գերագույն աստվածը և մյուս աստվածների արարիչը կայծակնացայտ Արամազդն է, որը առասպելներում կոչվել է «մեծ» և «արի»:
4. Առասպելների միջոցով բացահայտվում է հայոց դիցարանը, այսինքն՝ հայ հեթանոսական աստվածների ընտանիքը:

31. Հեղինակներից ո՞րը որ բնագավառն է ներկայացնում, համապատասխանեցնել.

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| ա. Մովսես Խորենացի | 1. բանաստեղծություն |
| բ. Ֆրիկ            | 2. պատմագրություն   |
| գ. Վարդան Այգեկցի  | 3. վարքագրություն   |
| դ. Կորյուն         | 4. Առակագրություն   |

32. Ո՞ր պատմիչի «Հայոց պատմությունն» է ավարտվում «Ողբով».

33. Ո՞ր վիպերգից են հետևյալ տողերը.

Մինչ դու գնացեր

Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,

Ես ւերակացս ո՞ւմ թագավորեմ:

34. Ո՞վ է այս տողերի հեղինակը.

Դո՛ւն կրակ, հա՛քածդ կրակ,

Վո՞ւր մե կրակին դիմանամ:

35. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» ի՞նչ ժանրի ստեղծագործություն է.

36. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» երկում ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրված.

37. Րաֆֆու «Սամվել» վեպում ո՞վ է Շապուհի կանանոցն անվնաս վերդարձնում Տիգրան.

38. Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպի ո՞ր գլխում է նկարագրված հայ քսանմեկ քաջերի կռիվն արաբական զորքի դեմ.

39. Մուրացանը «Գևորգ Մարգալետունի» պատմավեպում ի՞նչն է համարում ազգի հիմքը.

40. Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպի հերոսներն են հակառակորդ եղբայրները՝ Հակոբոսն ու Սահակը.

41. Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հատվածում են բնության ոգիները ողջ բնության հետ սզում Անուշի և Սարոյի վաղամեռիկ սերը.

**42. Դասավորել Հովհաննես Թումանյանի քառյակի տողերը.**

Թռչում է միշտ իմ մտքում

Թռա՛վ, գնաց վիրավոր

Թևը արնոտ ու մոլոր

Մի հավք գարկի ես մի օր

**43. Ո՞ր ստեղծագործության մեջ է Եղիշե Չարենցը ներկայացրել հայրենի քաղաքի՝ Կարսի վերջին տարիների պատմությունը.**

**44. Եղիշե Չարենցի ո՞ր շարքի մեջ է հանդես գալիս արևելյան գեղեցկուհու՝ գոգալի կերպարը.**

**45. Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքում ո՞ր հերոսն է հեղինակի աշխարհայացքի կրողը.**

**46. Տրված շրջաստյթներից որն է սխալ բացատրված.**

Ավարայրի երգիչ-Եղիշե, ամենայն հայոց բանաստեղծ-Հովհաննես Թումանյան, Տրոյական պատերազմի երգիչ-Փավստոս Բուզանդ, սև ցեղերի սերմնացան-Ակսել Բակունց

**47. Գտնել գոյականով արտահայտված հատկացուցիչները:**

- Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ

Ու հեքիաթային լույսեր կվառեմ:

- Հողմը սրարշավ

Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի

Թերթերը տարավ:

- Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին,

Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս:

- Նրա խոսքերի մեղմ օրորում

Աշխարհը թվաց ինձ անեզերք,

Կարծես հնչում էր իմ օրերում

Աստղերի երկրում հյուսված մի երգ:

- Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,

Ո՞ւմ պատի տակ խավար գիշերով

Պիտի հանգչի նա մերժված ու խռով:

**48. Գտնել այն բառերը, որտեղ ձայնավորի հնչյունափոխություն կա.**

առօրեական, մսամթերք, խայտաբղետ, սիգապանձ, գինեգործ, լեզվաբան, հրեղեն, զգուշավորություն, ատենակալ, մատենագիր, առվակ, իշատեր

**49. Գտնել տրված բառերի բացատրության ճիշտ տարբերակները.**

պատեհապաշտ-պատվասեր, խթանել-թափ հաղորդել, գործակալ-որևէ գործի մեջ խիստ զբաղված անձ, գողտրիկ-գողունի, մեղանչել-ներում խնդրել, մատովակ-գինեգործ, ձերբագատվել-ազատվել, ապաշխարել-մեղք գործել

**50. Գտնել այն նախադասությունը, որում պատճառական բայ չկա.**

Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:

Ամեն առավոտ, բերելով օրվա ուտելիքը և թարմացնելով կժի ջուրը, սպասավորը միշտ կրկնում էր նույն խոսքերը:

Աբեղան տխուր ժպտում էր, հանգստացնում պատանուն՝ ասելով, որ ինքը լավ է զգում:

Գետնափորի թանձր խավարն ու գերեզմանային լռությունը հիշեցնում էին, որ այդ բոլորն արդեն անդարձ երազ է:

**51. Լրացնել բաց թողնված տառերը (դ-տ-թ).**

ար-յունք, բր-ուճ, զվար-, վր-ովմունք, որ-նել, նյար-ային, լաջվար-, եր-իկ, ըն-ացք, վար-ապետ, ըն-ամենը, ար-ուն

**52. Լրացնել բաց թողնված տառերը (ձ-ծ-ց).**

վեր-նել, խուր-, մազապուր-, հինավուր-, ուր-, դադ-, հայա-ք, բռուն-ք, կոր-նել, տր-ակ, արվար-ան, թխվա-ք

**53. Լրացնել բաց թողնված տառերը (ջ-ճ-չ).**

բա-կոն, ստեր-, ա-պարար, զի-ել, փու-, գո-ի, մխր-վել, դա-վածք, կն-իթ, խո-կոր, ճան-ասպան, կո-կել

**54. Լրացնել բաց թողնված տառերը (ը).**

առ-նթեր, ակ-նբախ, ան-նդհատ, գիրկ-նդխառն, դյուր-մբռնելի, ճեպ-նթաց, ան-նտել, վերջ-նթեր, առ-նչվել, ան-նթեռնելի, խոչ-նդոտ, ինքն-ստիճյան, այլ-նտրանք, հյուր-նկալ, հոտ-նկայս, գահ-նկեց

**55. Լրացնել բաց թողնված տառերը (ր-ռ).**

բարբա-, մատ-վակ, ոսկո-, ա-վույտ, ա-ժտորել, կ-ճիկ, կա-ուսել, հ-չակ, պա-կել, հու-թի, կարկա-ել, արբշի-, սարսու-, ու-ճանալ, ու-կան, կե-ոն

**56. Լրացնել բաց թողնված տառերը (ե-է).**

առ-ջ, մանր-, ան-անալ, միջօր-

**57. Գտնել գրության զույգ ձև չունեցող բառը (անձնանուն և աշխարհագրական անուն).**

Սոֆ-, Աս-, Արաքս-, Վիկտոր-

**58. Ո՞ր բառերն են գրվում միասին, անջատ կամ գծիկով.**

կողք(կողքի), քար(ու)քանդ անել, բոպե(առ)բոպե, վառ(կարմիր), (ալ)կարմիր, սրբություն(սրբոց), ուս(ուսի), (ի)սպառ, (ոտքից)գլուխ, հազիվ(հազ), ի(լրումն), (հոդս)ցնդել

**59. Բաղադրյալ հատուկ անունների գրություն.**

Հ(հ)այկական Լ(լ)եռնաշխարհ, Ա(ա)ռևտրի Հ(հ)ամաշխարհային Կ(կ)ազմակերպություն, Չ(չ)որրորդ Հ(հ)այք, Ռ(ռ)իչարդ Ա(ա)ռյուծասիրտ, Չ(չ)ինաստանի Ժ(ժ)ողովրդական Հ(հ)անրապետություն, Ն(ն)ապաստակ Հ(հ)ամաստեղություն, Ա(ա)րգիշտի Ա(ա)ռաջին, Հ(հ)այկական Բ(բ)արեգործական Ը(ը)նդհանուր Մ(մ)իություն, Գ(գ)րիմ Ե(ե)ղբայրներ, Տ(տ)իգրան Կ(կ)րտսեր, Գ(գ)այլ Վ(վ)ահան, Հ(հ)արավային Կ(կ)որեա

**60. Ե ձայնավորի արտասանությունը (է - յէ).**

անեփ, մեներգ, կիսաեփ, զուգերգ

61. Ո՞ր վանկի ձայնավորի վրա է դրվում շեշտը տրված բառերում.

գրեթե, քանիերորդ, միթե, չորրորդ

62. Գտնել քառավանկ բառերը.

խաչհամբույր, անէական, լեռնաբնակ, պարուսույց, հետաքրքրական, քննաշրջան, սնահավատ, դասասենյակ, մրցաշրջան, խնդրահարույց

63. Գտնել տրված բառերի արմատները.

Մնամեջ, նշաձող, հրաբուխ, սրածայր

64. Ո՞ր բառի մեջ երկհնչյունի հնչյունափոխություն կա.

հնամյա, աշտեակիր, պարուրել, սրամիտ

65. Գտնել այն բառը, որտեղ կա *-ալ* վերջածանցը.

դանակ, բանակ, սուզակ, մտրակ

66. Գտնել այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից.

ածխահանք, ձկնկիթ, հետզհետե, օրըստօրե

67. Տրված բառագույգերից, որո՞նք են կազմված միայն հոմանիշներից.

լայնախոհ-լայնահորիզոն, լախտ-մտրակ, գուղձ-հողակոշտ, մակույկ-նավակ, թեզանիք-թևք, քողարկել-պարտակել, թափթփված-խառնափնթոր, բուրյան-հոտավետ, շրջմոլիկ-թափառական, ընչացք-բեղ, բամբասանք-ասեկոսե, ընտրող-քվեարկող, ընձեռնել-տրամադրել, մոմռալ-կսկծալ, արտասվել-հեկեկալ, ադամանդ-շողակն

68. Տրված բառագույգերից, որո՞նք են կազմված միայն հականիշներից.

խոչընդոտել-նպաստել, ստերջ-անջրդի, հուսահատվել-գոտեպնդվել, շաղակրատ-քչախոս, գժտված-համերաշխ, կայտառ-շենշող, աղտեղություն-մաքրություն, սեղմ-ճապաղ, հեղհեղուկ-անհողողող, կշտամբել-գանահարել, իրազեկ-անտեղյակ, բացասում-հաստատում

69. Տրված բառերից ո՞րը հոմանիշ չէ կասկածել բառին.

տարակուսել, երկբայել, երկմտել, կարկամել

70. Գտնել համանունների բացատրության ճիշտ տարբերակները.

դատել-դատողությունանել  
դատել-աշխատել, վաստակել  
մի-որևէ, ինչ-որ  
մի-մեկ  
մեկնել-ուղևորվել  
մեկնել-բացատրել, պարզաբանել  
կոտորակ-ամբողջի որևէ մասը  
կոտորակ-ջարդ, սպանդ

71. Ի՞նչ է նշանակում սկիհ բառը.

72. Ի՞նչ է նշանակում սիրտը փորն ընկնել դարձվածքը.

**73. Գտնել այն նախադասությունը, որի մեջ բառագործածության սխալ կա.**

Այդ պճնագգեստ տիկինը, բնականաբար, տարրական հասկացողություն չունի միջուկային ֆիզիկայից:

Դատարանի դահլիճում հանցագործը լիովին մեղանչեց իր գործած մեղքերի համար:

Գիշեր էր, և լուսնի մահիկի աղոտ լույսը հագիվ էր լուսավորում խորհրդավոր անցորդի ճանապարհը:

Գործընկերները հարգանքով էին վերաբերվում արտասահմանում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդին:

**74. Ո՞ր բառերը հոգնակի թիվ չունեն.**

գեղագիտություն, ճակատագիր, արհամարհանք, կտորեղեն, պետություն, ցորեն, քրիստոնեություն, Արեգակ, ֆուտբոլ, վագր, քիմիա, ժողովուրդ

**75. Ո՞ր բառերն են ենթարկվում ոջ հոլովման.**

կալվածատեր, քույր, հորեղբայր, գործարանատեր, աներ, սկեսուր, ընկեր, տալ, մորեղբայր, հողատեր, տիկին, եղբայր

**76. Ո՞ր ածականը համեմատության աստիճան չունի.**

ամայի, վեհ, ջերմ, համեստ

**77. Տրված կապերից ո՞րը կարող է գործածվել թե՛ նախադաս, թե՛ հետադաս.**

նախքան, ի, բացի, հանուն

**78. Գտնել այն նախադասությունը, որի մեջ համաձայնության սխալ կա.**

Ճարտարապետն իր օգնականների հետ բժախնդրորեն հետևում էր շինարարության ընթացքին: Չայրացած ամբոխը խոնվել էին հրապարակում, և տարածվող իրարամերժ լուրերը անհանգստության մի նոր ալիք բարձրացրին:

Մի քանի կրտսեր դպրոցականներ մոտեցան նրան, ու հետաքրքիր զրույց սկիզբ առավ:

Ոռոգման ջրանցքը, քաղաքին ջուր մատակարարող ջրատարը հազարավոր ստրուկների երկարամյա աշխատանքի արդյունքն էին:

**79. Կետադրել տրված նադադասությունները (ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի).**

Չյունածածկ անտառում ոչ մի շարժում չկար ցուրտն ու կատարյալ անդորրը սառեցրել էին բնության սիրտը:

Գրիգոր Պահլավունին հաճախակի էր բացակայում Բջնիից ամսվա մեջ մեկ արաթ

Սանահինում էր:

Գերմանիայի կայսրը նույնպես պատիվ էր արել ներկա լինելու հունգարացի նշանավոր երգահանի համերգին նա նստած էր առաջին օթյակում կողքին շքեղ հանդերձանքով ու արդուզարդով մի տիկին:

Մի օր թագավորը նա վաղուց էր նկատել իր ծեր բարեկամի անհանգստությունը բայց կռահել չէր կարողանում ծերունուց պահանջեց ասել մտահոգ լինելու պատճառը:

**80. Գտնել այն նախադասությունը, որտեղ կետադրական սխալ կա.**

Ձորահովտից ներքև՝ ընդարձակ արոտներում, հետզհետե տարածվում էր հովվական սրնգի՝ գառներին կանչող անուշ նվագը:



Վաղուց՝ վաղնջական ժամանակներում, ազատությունը մեծ թռչուն էր՝ արև հիշեցնող բուսր վառ փետուրներով:

Դաժան մի օր հարկահանները չոքեցին բանաստեղծի դռանը՝ հարկ էին պահանջում:

Նա ամեն ինչ տվեց հարկի դիմաց՝ ն՛տուն, ն՛ հող, ն՛ ապրանք, բայց պարտքը մարելու համար ունեցածը չբավարարեց:

**81. Համապատասխանեցնել տրված նախադասությունները ըստ տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականության.**

1) Կանադացի գիտնականները պարզել են, որ ճանապարհով ընթացող ավտոմեքենաների արագությունից կախված՝ հողի ճանապարհամերձ շերտերը կարող են աղտոտվել 25-50 մ մակերեսով:

2) Սառցածածկույթի առաջացումը կանխարգելելու նպատակով ճանապարհներին ցանված աղի վնասակար ազդեցությունը բոլորին հայտնի է:

3) Հասցվող վնասը, սակայն, հիշատակված դեպքերով չի սահմանափակվում.

ճանապարհներին ցանված աղը շատ ավելի մեծ վնաս է պատճառում, քան կարծում են շատերը:

4) Ճանապարհամերձ ծառերն ու բուսականությունը հողի մեջ գոյացած աղի ավելորդ քանակության պատճառով վնասվում են, իսկ ձնհալի ժամանակ ճանապարհներով հոսող աղի ջրի վտակները, թափվելով գետերի ու լճերի մեջ, աղտոտում են դրանք:

**82. Ո՞ր պատմիչի «Հայոց պատմության» շնորհիվ են պահպանվել հայ հնագույն վիպերգերն ու առասպելները.**

**83. Ո՞ւմ ծնունդն է նկարագրվում հետևյալ երգի մեջ.**

Երկներ երկին,

Երկներ երկիր,

Երկներ և ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ուներ

Եվ զկարմրիկն եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծու՛խ ելաներ,

Ընդ եղեգան փողբո՛ց ելաներ,

Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ...

**84. Ո՞վ է հետևյալ տողերի հեղինակը.**

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.

Անմահական ջրբով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա:

**85. Տալ «Մասնա ծոեր» վիպերգի ճյուղերի ճիշտ դասավորությունը.**

**86. Ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրված Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպում.**

**87. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում ո՞վ է բարձրանում սեղանին և ոգեշունչ ճառ ասում.**

**88. Դասավորել Հովհաննես Թումանյանի տրված քառյակի տողերը.**

Ձեռքերն արնոտ նա գնում է դեռ կամկար

Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան  
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան  
Բերանն արնոտ Մարդակերը էն անբան:

89. Ո՞ւմ մասին է Ավ. Իսահակյանը գրել. «Նա մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և՛ սերը, և՛ հայրենիքը, և՛ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լեզուն».
90. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործության մեջ է պատկերված Խաչատուր Աբովյանի ողբերգական կերպարը.
91. «Վարդանանք» պատմավեպը գրելիս Դերենիկ Դեմիրճյանի համար ո՞ր պատմիչի երկն է սկզբնաղբյուր դարձել.
92. Ակսել Բակունցի «Ալլախական մանուշակ» պատմվածքում ո՞ր կերպարն է բացակա իրականությունից և ժամանակային ըմբռնումից.
93. «Դանայան տակառ » արտահայտությունը Գրիգոր Չոհրապի ո՞ր նովելում է գործածվել ու դարձել համեմատության եզր:
94. Գրիգոր Չոհրապը ո՞ր նովելում է ներկայացնում սիրո հավերժության, գեղեցիկ ապրելու մարդկային ձգտման, կնոջ ներաշխարհի ու հոգեբանության բացահայտման խնդիրները.
95. «Անունդ տալիս» բանաստեղծության մեջ ու՞մ է դիմում Համո Սահյանը.
96. Որտե՞ղ են տեղի ունենում Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի գործողությունները.
97. Տրված հատվածում գտնել գոյականով արտահայտված հատկացուցիչները.  
Կցրեմ հոգուս հուշերը ցավոտ  
Ու հեքիաթային լույսեր կվառեմ:  
Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին,  
Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս:  
Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,  
Ո՞ր պատի տակ խավար գիշերով  
Պիտի հանգչի նա՝ մերժված ու խռով:  
Ասված խոսքերի մեղմ օրորում  
Աշխարհը թվաց ինձ անեզերք:

98. Տրված նախադասությունը ենթարկել ձևաբանական վերլուծության.

Ես, սակայն, վայրկյաններ անց սթափվում էի, և հոդս էին ցնդում մտացածին երևակայություններս, դարձյալ հայտնվում էի մեր՝ փարթամ կանաչի մեջ թաղված փողոցում՝ միշտ բանուկ, եռուզեռով լի:

99. Գտնել այն բառերը, որոնց մեջ ձայնավորի հնչյունափոխություն կա.

զինակից, իգական, ընչաքաղց, ատենակալ, հանրամատչելի, գունային, զգուշավորություն, տեղեկատվություն, խայտաբղետ, հազարաթերթիկ, տնտեսություն, ատամնաբուժարան:

100. Գտնել այն բառազույգերը, որոնց մեջ բառերի բացատրությունը ճիշտ է

պատեհապաշտ-պատվասեր, դշխուհի-թագուհի, գողտրիկ-գողունի, հանապազօրյա-ամենօրյա, դեղձան-խարտյաշ, օթոց-բազմոց, խթանել-թափ հաղորդել, դերձան-շիկահեր

**101. Լրացնել բաց թողնված տառերը (դ-տ-թ)**

եր-ում, գր-նակ, ար-արև, հար-արել, հար-աքանդակ, անդա-ար, որ-նել, ճամփոր-ել, ան-ամակցել, կոկոր-, հեր-ական, խորհուր-

**102. Լրացնել բաց թողնված տառերը (դ-խ)**

բա-տորոշ, ե-կելի, ժանտա-տ, գմբու-տ, թ-կի, ապերա-տ, զե-չել, զե-ություն, դժո-ք, դրա-տային, լայնափո-ք, մա-թանք

**103. Լրացնել բաց թողնված տառերը (ջ-ճ-չ)**

անտերուն-, զեղ-ել, փար-, պ-րասեր, մի-ատ, գո-յուն, կառ-ել, ակնակապի-, հառա-անք, ա-առու, բա-կոն, դար-նագույն, խո-ակ, խո-կոր, ա-ալուրջ, զոքան-

**104. Լրացնել բաց թողնված տառերը (եվ)**

առեր-ույթ, ոսկ-առ, գոտ-որել, հոգ-իճակ, -դոկիա, դափն-արդ, հոգ-արք, տար-երջ, հար-անցի, արևմտա-րոպական, հ-իհն, ոգ-որիչ

**105. Լրացնել բաց թողնված տառերը (ը)**

առ-նթեր, մթ-նկա, հոտ-նկայա, առ-նչություն

**106. Տրված բառերից որի մեջ է յա գրվում.**

Եղ-, Անան-, բար-ցակամ, օվկ-նոս

**107. Ո՞ր բառերն են գրվում անջատ, գծիկով կամ միասին.**

(հօդս)ցնդել, (կազմ)պատրաստ, (ի)վերջո, գլուխ(գործոց), (սերնդե)սերունդ, օր(օրի), (ըստ)արժանվույն, ձեռք(բերում), (մուզ)կանաչ, հոգս(ու)ցավ, (դեմ)հանդիման, րոպե(առ)րոպե

**108. Բաղադրյալ հատուկ անունների գրություն.**

Մ(մ)եծ Ե(ե)ղեռն, Ա(ա)շոտ Ո(ո)ղորմած, Գ(գ)ևորգյան Ճ(ճ)եմարան, Բ(բ)ալկանյան Թ(թ)երակղզի, Ա(ա)րաբական Մ(մ)իացյալ Է(է)միրություններ, Կ(կ)արմիր Բ(բ)լուր, Կ(կ)ոտայքի Մ(մ)արգ, Լ(լ)ոռու Մ(մ)արգ, Կ(կ)արիճ Հ(հ)ամաստեղություն, Մ(մ)ատթեոս Ա(ա)ռաքյալ, Ա(ա)րիստակես Գ(գ)րիչ, Ա(ա)րևելքի Մ(մ)արգարիտ

**109. Ե ձայնավորի արտասանություն (է-յէ).**

աներկբա, գետեզր, տասներեք, էլեկտրաեռակցում

**110. Տրված բառերում, շեշտը ո՞ր վանկի ձայնավորի վրա է դրվում.**

առավել, դրամարկդ, իհարկե, որևիցե

**111. Գտնել այն բառը, որտեղ է ձայնավորի հնչյունափոխություն կա.**

իննսուն, իրական, իգական, իդձ

**112. Գտնել այն բառը, որտեղ կա -ի վերջածանցը.**

գարի, մոլի, տարի, գերանդի

**113. Տրված բառերից և բառաձևերից, որո՞նք են կազմված միայն փակ վանկերից.**  
կապտել, վայրկյաններ, ընդունված, համրանալ, պատճառներ, անցկացնել, կրծքավանդակ, ընտրաշավ, հնձվոր, աջհամբույր, տնկարան, ենթարկվել

**114. Տրված բառերից ո՞րն է կազմությամբ բարդ բառ.**  
լուսանցք, նվագաձու, ժպտերես, լաջվարդ

**115. Տրված բառագույգերից, որոնք են կազմված միայն հոմանիշներից.**  
գիշերերգ-ցայգերգ, արամբի-զամբիկ, գինարբուք-խնջույք, գինդ-ականջող  
քանքար-անկյունաքար, բնիկ-երկրացի, բողոքել-տրտնջալ, բովանդակ-ամբողջ  
գամվել-մեխվել, գաղտնապահ-փակբերան, գարշադեմ-տզեղ, գնահատելի-արժեքավոր  
բլուր-բարձունք, անտունի-տնանկ, բծախնդիր-քմաճաշակ, բյուր-բազմաթիվ

**116. Տրված բառագույգերից, որոնք են կազմված միայն հականիշներից.**  
հնարագետ-անճարտար, իրական-երևակայական, ակնածել-արհամարհել, ժուժկալ-անգուսպ  
գիտուն-իմաստակ, բիրտ-քնքուշ, բաց-գոց, մարմնեղ-վտիտ  
պերճ-անշուք, բարեկեցիկ-անապահով, հաստատուն-անկայուն, հոռետես-լավատես  
լայնաթիկունք-պարթև, խորապես-հարևանցի, մեծահարուստ-ընչագուրկ, կալանավորել-  
ձերբագատել

**117. Կարկամել բառի հոմանիշը**

**118. Գտնել համանունների բացատրության ճիշտ տարբերակները.**

դար-հարյուրամյա ժամանակաշրջան  
դար-բարձրություն  
երեց-քահանա  
երեց-ավագ  
անցք-ձեղք  
անցք-իրադարձություն  
զնդան-դարբնի սալ  
զնդան-զոհասեղան

**119. Ի՞նչ է նշանակում անագորույն բառը.**

**120. Ի՞նչ է նշանակում կյանքը պղտորել դարձվածքը.**

**121. Տրվածներից ո՞ր բայաձևերն են դրված ներկա ժամանակով.**  
վեր եմ կենում, ելնում եմ, կամ, մի՛ եղիր, բերես, ցուցում են, տանում է, մի՛ գնա, դառնում եմ,  
գալիս եմ, կանք, լալիս են, գնա՛, տալիս եք, մի՛ թո՛իր, բերում եմ

**122. Գտնել այն նախադասությունը, որի մեջ բառագործածության սխալ կա.**  
Արևախանձ դեմքը, ճակատի խոր խորշոմները, աչքերում ծվարած թախիծը նրա տառապանքի  
լուռ վկաներն էին:

Շքեղ հագնված երկու երիտասարդներ, սևաթույր նժույզներ հեծած, կանգ առան երկաթակոփ դարպասների մոտ:

Վիրավոր ոտքը քարշ տալով՝ հրամանատարը անցնում էր խրամատից խրամատ և ցուցմունքներ էր տալիս զինվորներին:

Տարիներ անց միայն անվանի երգահանի հետնորդները նրա աճյունը տեղափոխեցին հայրենիք:

**123. Ի՞նչ վերջավորություն կստանան տրված բառերը հոգնակի թվի կազմության ժամանակ (-եր, -ներ)**

բաղաձայն, հանքափոր, դաշտամուկ, վաչկատուն, սպունգ, ոտնաձայն, պատմագիր, արծվաբույն, նստացույց, արջորս, սառցահոր, սրճեփ, վագր, սղագիր, սևամորթ, վանահայր

**124. Տրվածներից ո՞ր բառերն ենթարկվում վա հոլովման.**

ամիս, ժամանակ, վայրկյան, երեկ, առաջ, երկուշաբթի, շաբաթ, վաղուց, դար, անգամ, ամառ, ուրբաթ, կեսգիշեր, ցերեկ, տարի, ձմեռ

**125. Տրվածներից ո՞ր ձևն է մերժելի.**

պակաս ջանասեր, ամենից ազնվագույն, ամենաարդարամիտ, ավելի բարձրահասակ

**126. Տրվածներից ո՞ր բառերն են պատկանում և խոնարհման.**

հանգցրո՛ւ, հորդում է, բազմացավ, արբեցնող, մոռացի՛ր, ասացի, լվացվելիս, արի՛, կոտրատված, լռեցրեց, լարված, փախավ

**127. Գտնել այն նախադասությունը, որի մեջ համաձայնության սխալ կա.**

Աստղերի նվաղուն լույսը տարտամորեն գծագրեց Տղմուտի շամբուտներն ու ավերը, որ ընկած էին երկու բանակների միջև:

Իսկ այս առավոտ չէին երևում ո՛չ հովիվը, ո՛չ նրա հոտը:

Անակնկալ փախուստն ու պարտությունը կատաղեցրեց Բեշիրին, բայց նա Մարգպետունու հետ ընդհարվել չէր ուզում:

Այդ ժամանակ Իսրայելում մի մարդ էր ապրում իր կնոջ հետ, որը երկար տարիներ զավակ չունեք:

**128. Կետադրել տրված նախադասությունները (Ո՞ր նախադասության մեջ առաջին բառից հետո բուրժ պիտի դրվի).**

Մարդու վայրենաբարո ու հրեշավոր արարքից զայրացած զանգակն ընդմիշտ լքեց մահկանացուներին և բարձրացավ երկինք:

Նա ով մարդասեր ու բարերար է ճշմարիտ փառքի է արժանի:

Առավոտյան բարձրաբերձ լեռների վրա շամանդաղն սկսեց աստիճանաբար ցրվել:

Կղզու վառվռուն ծաղիկներով լի հովիտներում հավերժահարսերին նվիրաբերված մի եղջերու էր ապրում:

**129. Համապատասխանեցնել տրված նախադասությունները ըստ տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականության.**

1. Ձիու սմբակի հարվածից կիսով չափ շուռ եկած բրոնզե թասից ջուրը թափվում է ներքև, լցվում ավազանը:

2. Երևանի հրապարակներից մեկում՝ երկաթուղային կայարանի դիմաց, կանգած է հայկական ժողովրդական դյուցազնավեպի հերոս Սասունցի Դավթի արձանը:

3. Դա, ըստ քանդակագործի մտահղացման, ժողովրդի համբերության բաժակն է՝ մինչև պռունկը լցված, իսկ ներքևում՝ հուշարձանի ստորոտում, ծովացել է ժողովրդի արցունքը:
4. Դավիթը կանգնած է ծառու եղած ձիու ասպանդակին ու երկու ձեռքով բռնել է ծանր թուրը:

**130. Գտնել այն նախադասությունը, որտեղ կետադրական սխալ կա.**

Մայրս՝ քնքուշ ու բարի, միայն մի գիրք էր կարդացել՝ Ավետարանը, և ամբողջ կյանքում օգնել էր անտերունչ աղքատներին՝ իր հացը կիսելով նրանց հետ:

Նրան կարելի էր տեսնել կա՛մ խոհանոցում, կա՛մ տեսուչի տանը (մեր տեսուչը ապրում էր դպրոցի գավթում), կա՛մ բակում շրջելիս:

Երկրի նորընծա թագավորը հոգատար ու բարի մի մարդ էր. նա գիշերները շրջում էր փողոցներով՝ տեսնելու ինչպես է ապրում ժողովուրդը:

Հուզմունքից աղջկա սիրտը բաբախում էր, այտերը՝ այրվում, իսկ մայրը շփոթահար ու այլալված նայում էր նրան:

**131. Կետադրել տրված նախադասությունները (Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի).**

Աղվեսը պատկանում է շնագզիների ընտանիքի գիշատիչ կաթնասունների ցեղին և տարածված է բոլոր մայրցամաքներում բացի Ավստրալիայից և Անտարկտիդայից:

Ասում են Տորթը այնքան ուժեղ էր որ որձաքարե ապառաժները տաշում էր եղունգներով գծում էր զանազան կենդանիների պատկերներ:

Հայոց արքայից արքա Տիգրանը մի սովորություն ուներ երբ վերադառնում էր օտար երկրից արքունիք մտնելուց առաջ մշտապես լողանում էր Հայաստանի որևէ ջրվեժում:

Անվանի գրականագետների ու արվեստագետների մեջ ով էր ինձ նկատողը մանավանդ որ չէի կարդացել Աստվածաշունչը:

**132. Ո՞րն էր Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի քնարական հերոսի ողբի պատճառը.**

**133. «Մասնա ծոեր» վիպերգում հերոսներից ո՞վ է ասում և ու՞մ.**

Մըսրա օջախ կանգնեցուցես,

Հայու օջախ փչացուցես

**134. Գրական ստեղծագործության ի՞նչ տեսակ է.**

Երբ սերն ի յաշխարհ եկաւ,

եկաւ իմ սիրտըս բնակեցաւ.

Ապա յիմ սրտէս ի դուրս՝

յերկըրէ յերկիր թափեցաւ.

Եկաւ ի գլուխս ելաւ,

ի ըղեղս ելաւ թառեցաւ,

Աչիցս արտասուք ուզեց,

նա արիւն ի վար վաթեցաւ:

**135. Մխիթար Գոշի ո՞ր առակում է ամենից բարձր դասվում աշխարհը շենացնող աշխատանքը.**

**136. Ո՞վ է մեր քնարերգության մեջ սկզբնավորել անձնական բանաստեղծությունը.**

137. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում ինչպե՞ս է ավարտվում Հասան Խանի և Ադասու մենամարտը.

138. Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպում ո՞վ էր հայոց թագուհին.

139. Ո՞րն է Միքայել Նալբանդյանի բանաստեղծությունից բաց թողնված բառը.

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,  
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին,  
Արյո՛ւն ու ..... թշնամու վերա,  
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

140. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսին է ներկայացնում հետևյալ քառատողը.

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,  
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.  
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,  
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

141. Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ քառատողը.

Ապիկա՛ր մարդիկ, ստրուկ ու վախկոտ,  
Ո՞վ տվեց սուրը նմանի ձեռին,  
Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք՝  
Իշխել, խողխողել իր նմաններին:

142. Նշե՛ք Վահան Տերյանի բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականությունը.

1. Կախարդական մի շղթա կա երկնքում
2. Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու
3. Աներևույթ, որպես ցավը խոր հոգու
4. Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն

143. Գտնել Եղիշե Չարենցի պոեմները.

«Գանգրահեր տղան», «Գիրք ճանապարհի», «Սոմա», «Դեպի լյառը Մասիս», «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Երկիր Նաիրի», «Դանթեական առասպել», «Ամենապոեմ», «Ամբոխները խելագարված», «Վահագն», «Պատգամ»

144. Գտնել Ակսել Բակունցի «Մթնաձորի «չարքը»» պատմվածքի հերոսներին.

Միմոն, Հազրո, Սաքան, Ասյա, Դիլան, Պետի, Մանաս, Սոնա

145. Միսաք Մեծարենցը ո՞ր բանաստեղծության մեջ է նկարագրում գյուղի առօրյա աշխատանքի գեղեցկությունը.

«Մեղուները», «Վայրկյան», «Արևին», «Զրտուք»

146. Հովհաննես Շիրազի ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ քառատողը.

Հոգիս արթնացավ հարավի բույրից,  
Ինձ է դուրս կանչում գեփյուռը նրա.  
Զյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:

**147. Քանի՞ հատկացուցիչ կա նշված հատվածում.**

Միջանցքի երկար, կոշտ ու կոպիտ տաշված դռները ձեղնահարկի տարբեր հատվածներն էին տանում, ու թեև լույսի ոչ մի ճառագայթ անմիջաբար ներս չէր թափանցում, միջանցքի այդ հատվածում այնքան էլ մութ չէր. տարբեր կողմերում դեպի դուրս բացվող նեղ լուսամուտներ կային:

**148. Գտնել այն բառերը, որոնց մեջ մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

նախատրամադրվել, ծխամոլ, տնական, տեղեկատվություն

**149. Գտնել այն դարձվածքը, որի բացատրությունը ճիշտ է.**

գունայի տակ պարել-հարսանիքի մասնակցել  
դաս առնել-ուսուցչություն անել  
դուռը ցույց տալ-վռնդել  
ծուխը քամուն տալ-օջախ վառել

**150. Տրված նախադասությունը ենթարկել ձևաբանական վերլուծության.**

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ զբաղվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողբոջել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

**151. Լրացնել բաց թողնված տառերը (գ-կ-ք)**

ավա-անի, հրաձ-արան, ճ-նաժամ, շո-եխաշել, հավա-ել, հո-նել, մար-արե, թան-արժեք, եր-ացանկ, թար-մանիչ, արտասու-, ճրա-ակալ

**152. Լրացնել բաց թողնված տառերը (ջ-ճ-չ)**

անտերուն-, մի-ամտություն, ըն-ագուրկ, դար-ին, պ-րանք, մին-և, ա-քաբաց, թր-ոց, մոն-յուն, թո-նաշուկա, զեղ-ել, խո-կոր

**153. Լրացնել բաց թողնված տառերը (ր-ռ)**

սարսու-, ու-ճանալ, ու-կան, կե-ոն, բարբա-, մատ-վակ, ոսկո-, ա-վույտ, ա-ժևորել, կ-ճիկ, կա-ուսել, հ-չակ, պա-կել, հու-թի, կարկա-ել, արբշի-

**154. Լրացնել բաց թողնված տառերը (կրկնակ բաղաձայններ)**

մ-կահավ, տա-ագույն, ու-ահայաց, միատա-, ֆի-երեն, հո-անդական, ու-եզրություն, ըն-իմակաց, ա-ահայր, տա-ալուծել, ու-ընթաց, ի-երորդ

**155. Լրացնել բաց թողնված տառերը (ը)**

ակ-նդետ, ձեռ-նտու, խոչ-նդոտ, լուս-նկա

**156. Ո՞ր բառի մեջ է իա գրվում.**

Օֆել-, Մար-մ, Հրաչ-, Ման-

**157. Տրվածներից որո՞նք են գրվում միասին, անջատ կամ գծիկով.**

բազկաթոռ (մահճակալ), մուգ (կարմիր), բերք (ու) բարիք, աջ (ու) ախյակ, բաց (սիրտ), գորշ (դեղնավուն), դեպքից (դեպք), գիրք (գրոց), վառ (կանաչ), երկու (հինգերորդ), դեմ (հանդիման), գեր (ճշգրիտ)



158. Բաղադրյալ հատուկ անունների գրություն.

Աղիս Աբեբա, Բերմուդյան Եռանկյունի, Մալթայի Հանրապետություն, Մայր Թերեզա, Ազգային ժողով, Չինգիզ խան, Արծրունյաց տուն, Թովմաս առաքյալ, Արևելյան Թիմոր, Աղավնի համաստեղություն, Լորդերի պալատ, Արևմտյան Եվրոպա

159. Տրվածներից ո՞ր բառի արտասանությունն է համապատասխանում գրությանը. գուգագուլպա, զարդասեղան, ճեղքվածք, առաջնորդ

160. Տրվածներից ո՞ր բառում շեշտը չի դրվում վերջին վանկի ձայնավորի վրա. հոգեհմա, գերծանր, ծաղկեփունջ, ծանրաձող

161. Գտնել այն բառը, որտեղ *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա. լուսնկա, կաթնասուն, թվանշան, ձվաձև

162. Գտնել այն բառը, որտեղ *ույ* երկհնչյունի հնչյունափոխություն կա. արնագույն, սյունագարդ, մատուցարան, ձնծաղիկ

163. Գտնել այն բառը, որտեղ *կա -ուն* վերջածանցը. քառանկյուն, դերանուն, ոստյուն, փխրուն

164. Գտնել այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից. միջնորդագիր, խստաբարո, պնդօղակ, սանձարձակ

165. Տրված բառազույգերից որո՞նք են կազմված հոմանիշներից. ընձեռել-տրամադրել, մոմռալ-կսկծալ, արտասվել-հեկեկալ, ադամանդ-շողակն լայնախոհ-լայնահորիզոն, լախտ-մտրակ, գուղձ-հողակոշտ, մակույկ-նավակ թեզանիք-թևք, քողարկել-պարտակել, թափթփված-խառնափնթոր, բուրյան-հոտավետ շրջմոլիկ-թափառական, ընչացք-բեղ, բամբասանք-ասեկոսե, ընտրող-քվեարկող

166. Տրված բառազույգերից որո՞նք են կազմված հականիշներից. կշտամբել-գանահարել, իրազեկ-անտեղյակ, բացասում-հաստատում խոչընդոտել-նպաստել, ստերջ-անջրդի, հուսահատվել-գոտեպնդվել շաղակրատ-քչախոս, գծոված-համերաշխ, կայտառ-շենշող աղտեղություն-մաքրություն, սեղմ-ճապաղ, հեղհեղուկ-անհողողող

167. Գտնել էլուզակ բառի հոմանիշը.

168. Տրվածներից ո՞ր բառը համանուն չունի. Սիրտ, թառ, քանոն, արոք

169. Ի՞նչ է նշանակում ստոծանի բառը.

170. Ի՞նչ է նշանակում սարեր շուռ տալ դարձվածքը.

171. Տրվածներից ո՞ր բառերն են ենթարկվում *ու* հոլովման.

այգի, երեխա, օղի, կաղին, կիրակի, ամուսին, աղախին, բարդի, պատանի, որդի, պապ, գարի, անկողին, գինի, լուցկի, վագել

**172. Գտնել այն նախադասությունը, որի մեջ բառագործածության սխալ կա.**

Ըստ ավանդության՝ հայերի նախահայր Հայկը բռնակալ Բելին սպանել է երեքթևյան նետով: Երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ինչն էր տեղի տվել իր մասին պատվող այդ լուրերին:

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ գարկ է տալիս մարդկության զարգացմանն ու ձեռքբերումներին:

Հյուրասենյակի ձախ կողմում փայտե նորաճ պահարանն էր, աջ կողմում՝ զարդաքանդակ կլոր սեղանը՝ ծածկված ճերմակ սփռոցով:

**173. Տրվածներից ո՞ր բառերի հոգնակին է սխալ կազմված.**

զինագործներ, գորագնդեր, գիսաստղեր, տիկնայք, հանքափորեր, հողաթմբեր, արքայադաստեր, պարոնայք, ժողովուրդներ, ուղեբեռներ, ցուցափեղկեր, վագրեր, տեսակետներ, ընծուղտներ, կայսրեր, նախամարդիկ

**174. Տրվածներից ո՞ր բառերն են ենթարկվում *վա* հոլովման.**

թթօղի, օր, սոճի, հոգնակի, օր, գիշեր, տարի, շաբաթ, գետաձի, ամուսին, պատանի, տարի, շաբաթ, նախնի, ուխտատեղի, նավաստի

**175. Տրված դերանուններից ո՞րը հոգնակի թիվ չունի.**

ոչ մեկը, այսպիսի, մյուս, ոմն

**176. Ընդական եղանակի քանի՞ բայաձև կա տրված հատվածում.**

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,  
Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,  
Թողե՛ք, որ լինեմ հեռավոր, մենակ,  
Չզգամ, որ կա սեր, կ' գնորք, կ' լաց...

**177. Գտնել այն նախադասությունը, որի մեջ համաձայնության սխալ կա.**

Հավաքի մասնակիցներից ամեն մեկն իր նախասիրություններն ուներ և խոսում էր հենց դրա շուրջ:

Զայրացած ամբոխը, զինված բահերով ու եղաններով, խառնիխուռն շարքերով հարձակվեց հյուղ մտած ավազակների վրա:

Երիտասարդներից մի քանիսը, որ առավել անհամբեր էին, առանձնացան խմբից ու սկսեցին մրցել:

Լուսաբացին հրամանատարն իր փոքրաթիվ զորքով թաքնվեցին անտառում, որ թիկունքից հարվածեն ու հանկարծակիի բերեն թշնամուն:

**178. Կետադրել տրված նախադասությունները (Ո՞ր նախադասության մեջ միայն ստորակետեր պետք է լինեն).**

Վաղնջական ժամանակներում Սևանա լճի տեղում ցամաք է եղել իսկ բլուրներին մարդաշատ հյուղեր որոնց երդիկներից բարձրացող ծուխը օձի պես գալարվելով հասնում էր երկինք:

Սպասավորները մտան բոլոր անձավները փնտրեցին ամենուր բայց ապարդյուն ժայռերն ասես թաքցրել էին հովվին:

Պետք է ժամանակին հետ քայլել որովհետև երեկը այսօր չէ ոչ էլ այսօրը երեկ:

Երբ արջը սաստիկ մոնչյուն արձակելով հարձակվեց իշխանն աներկյուղ ընթացավ առաջ բարձր գոռաց նրա ականջին ու ծանր բռունցքը մուրճի պես իջավ կենդանու գլխին:

**179. Համապատասխանեցնել տրված նախադասությունները ըստ տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականության.**

1. Չորաբանակները, որ ատում էին միմյանց, դիրքեր գրավեցին սառնորակ ջրերով ու հուռթի բուսականությամբ ընդարձակ մի հովտում:
2. Քրիստոսի ծննդից շատ առաջ՝ բիբլիական ժամանակներում, ամբարիշտ փղշտացիները պատերազմ հայտարարեցին Իսրայելին:
3. Բայց արդեն որոշված էր. ընդամենը մի քանի ժամ հետո այդտեղ պիտի բախվեին զինվորները, և ձիերի սմբակների տակ պիտի տրորվեր ծաղկուն մարգագետինը:
4. Թվում էր՝ անհեթեթություն է ոտքի կոխան դարձնել այդ սքանչելի վայրը:

**180. Գտնել այն նախադասությունը, որտեղ կետադրական սխալ կա.**

Դեմքը մռայլ էր, հոնքերը՝ կիտած, աչքերը՝ թափանցող, միշտ մտախոհ, միշտ անհանգիստ ինչ-որ բանից:

Աստծո որդին, որ օժտված էր մարդկանց մտքերը կարդալու ունակությամբ՝ հասկանում էր՝ ով ինչ նպատակով է նվիրատվություն անում:

Չորրորդ կողմում Դվինի եկեղեցին էր՝ իր բարձր պարսպով, գմբեթարդ տանիքով՝ խաչը գլխին, և կամարակապ դռներով:

Ումանք հագել էին ոսկեթել երկար պատմուճան, դրա վրա՝ թանկագին կերպասյա վերարկու, մյուսները՝ մինչև ծունկը հասնող պարզ ու անպաճույճ վերնագգեստ:

**181. Հայոց ո՞ր վիպերգում է մարերի թագավորն ամուսնանում հայոց արքայի քրոջ հետ.**

**182. Տրվածներից ո՞ր ձևակերպումն է համապատասխանում Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը.**

- գրի է առել հանելուկներ
- երգել է կնոջ նկատմամբ անմնացորդ սերը
- գրել է էպիկական պոեմ
- բնությունը ներկայացրել է այլաբանորեն

**183. Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից են այս տողերը.**

- Ամեն մարդ չի կարա խըմի՝
- իմ ջուրըն ուրիշ ջրերն է.
- Ամեն մարդ չի կանա կարդա՝
- իմ գիրըն ուրիշ գրերն է:

**184. Ի՞նչ իրադարձություններ են ընկած Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» վեպի հիմքում.**

**185. Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է այս քառատողը.**

- Ու նրանց հետ՝ ցող-արցունքով*
- Լցված սրտերն ու աչեր՝*
- Մարի ծաղկունք տխուր սյուքով*
- Հառաչեցին էն գիշեր:*

**186. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է Ավետիք Բասիակյանի «Հավերժական սերը».**

187. Ո՞ր ժանրով չի ստեղծագործել Հովհաննես Թումանյանը.

188. Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

Ժամանակը իր վախճանին կհասնի  
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,  
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,  
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...

189. Տրվածների մեջ գտնել Դանիել Վարուժանի բանաստեղծությունները.

«Մեռնող բանվոր», «Արևին», «Վիշտք հայուն», «Հիվանդ է», «Իմ մահը», «Ջրտուրք», «Կարտի նամակ», «Ձոն», «Ցորյանի ծովեր», «Հունձք կը ժողվեմ...», «Իմ ցավը», «Մեղուները»

190. Տրվածների մեջ գտնել Վահան Տերյանի սիրո երգերը.

«Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Կարուսել», «Ինչպես չսիրեմ», «Արևածագ», «Աշնան մեղեդին», «Ինձ չես սիրում», «Տխրություն», «Վերադարձ»

191. Ո՞րն է Եղիշե Չարենցի ամենակարճ (16 տող) պոեմը.

192. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում Ավարայրի ճակատամարտում ինչ դիրք է գրավում Վասակ Սյունեցին.

193. Պարույր Սևակի ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ քառատողը.

Ո՛ւշ-ն՛ ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած.  
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:  
Եվ ժամանակից առաջ են ընկնում,  
Դրա համար ել չեն ներում նրանց:

194. «Դանայան տակառ» արտահայտությունը Գրիգոր Զոհրապի ո՞ր նովելում է գործածվել ու դարձել համեմատության եզր:

195. Ակսել Բակունցի ո՞ր պատմվածքի հերոսն է նախրապան Պետին.

196. Գտնել Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունից բաց թողնված բառը.

Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների  
..... ինձ նայող աչերն համբուրեմ,  
Գնամ ետևից ծիծեռնակների՝  
Նրանց հետ ետ գամ՝ գարունը բերեմ:

197. Գտնել այն նախադասությունը, որի մեջ կետադրական սխալ կա.

Միակ ուղևորը, որը լռելյայն նստած էր լաստանավի աջ եզրին, նկարիչ Փանոս Թերլեմեզյանն էր:

Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:

Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ հինավուրց տան շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:

Բոլորն արդեն գիտեին պատվավոր հյուրի ժամանելու մասին և պատրաստվում էին դիմավորել նրան:

**198. Գտնել այն բառը, որում կա մեկ հնչյունափոխություն.**  
գարեջրատուն, տեղեկատվություն, ծխամոլ, մտայնություն

**199. Գտնել այն դարձվածքը որի բացատրությունը սխալ է.**  
դուռը ցույց տալ-վռնդել  
դափնիների վրա հանգստանալ-այլևս չառաջադիմել  
գլուխ տալ-փոշմանել  
խելքահան անել-հիմարացնել

**200. Տրված նախադասությունը ենթարկել ձևաբանական վերլուծության.**

Չնայած չափազանց թուլությանը՝ մայրս ձեռքը դանդաղ հանում է վերմակի տակից. գուցե այլևս չի էլ տեսնում ինձ, սակայն մատները խարխափում են սավանների վրա, մինչև որ լռելյայն հանդիպում են իրեն պարզած ձեռքերիս: